# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 473-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի N 110-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (N 2)

---

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2023 թվականի փետրվարի 10-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնների ընդլայնում» ծրագրի մասին» N 110-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Տրելլո ինկ.» ընկերության հետ (Trello Inc., 888 Բրոդվեյ, Նյու Յորք քաղաք, NY 10003 ԱՄՆ) 2025 թվականի հունիսի 10-ի գնառաջարկով իրականացվող գործարքը, որով նախատեսվում է 2025 թվականի հունիսի 10-ից մինչև 2026 թվականի հունիսի 10-ն ընկած ժամանակահատվածի համար համակարգչային ծրագրերի արտոնագրերի ձեռքբերում՝ 633.34 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Ատլասսյան» ՍՊԸ-ի հետ (Atlassian Pty Ltd, 341 Ջորջ փողոց, Սիդնեյ NSW 2000, Ավստրալիա) 2025 թվականի հունիսի 16-ի և հունիսի 17-ի գնառաջարկներով իրականացվող գործարքը, որով նախատեսվում է 2025 թվականի հունիսի 30-ից մինչև 2026 թվականի հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածի համար համակարգչային ծրագրերի արտոնագրերի ձեռքբերում՝ 4,361.10 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

15.07.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ